ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2014թ. N ----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՄԵՐՈՒԺԱՆ ՍԱՐԳՍԻ ՏԵՐ-ԳՈՒԼԱՆՅԱՆԻՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Երևան քաղաքի 2796-րդ տարեդարձի առթիվ, ստեղծագործական ակնառու նվաճումների, հասարակական, գրական նշանակալի գործունեության և բազմամյա վաստակի համար գրող, հրապարակախոս Մերուժան Սարգսի Տեր-Գուլանյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՄԵՐՈՒԺԱՆ ՍԱՐԳՍԻ ՏԵՐ-ԳՈՒԼԱՆՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մերուժան Սարգսի Տեր-Գուլանյանը ծնվել է 1948 թվականի նոյեմբերի 29-ին, Ջավախքում:

1973 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ժուռնալիստիկայի բաժինը:

1973 թվականից աշխատել է «Գարուն» ամսագրում, որպես՝ գիտական աշխատող, այնուհետև՝ բաժնի վարիչ, ապա՝ գլխավոր խմբագրի տեղակալ, իսկ 1988-1990 թթ՝. ամսագրի գլխավոր խմբագիր:

Գրող, հրապարակախոս Մերուժան Տեր-Գուլանյանը 1988-1993թթ. եղել է «Ջավախք» հայրենակցական միության հիմնադիրը և ղեկավարը:

1978 թվականից Մերուժան Տեր-Գուլանյանը Հայաստանի գրողների միության անդամ է:

Մ. Տեր-Գուլանյանը եղել է ավելի քան 500 էսսեների, ակնարկների, հրապարակախոսական հոդվածների հեղինակ:

1990 թվականին եղել է ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավոր և ՀՀ ԳԽ լրատվության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ և ԳԽ նախագահության անդամ:

1995-99 թթ. եղել է ՀՀ ԱԺ պատգամավոր, գիտության, կրթության և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի անդամ:

1997 թվականին հիմնադրել է «Ար» հեռուստաընկերությունը:

2006-2009 թթ. եղել է «Դե Ֆակտո» ամսագրի գլխավոր խմբագիրը:

2009-2011թթ. եղել է Հանրային հեռուստատեսության «Արարատ» հեռուստաալիքի տնօրենը:

1978 թվականին արժանացել է ՀԼԿԵՄ Կենտկոմի մրցանակի դափնեկրի կոչմանը, իսկ 1980 թվականին՝ ՀԳՄ Միքայել Նալբանդյանի անվան մրցանակի:

1993 թվականին Մ. Տեր-Գուլանյանին շնորհվել է ԱՄՆ Լուիզիանայի նահանգի համալսարանի պատվավոր դոկտորի կոչում:

1999 թվականին պարգևատրվել է Ֆրիտյոֆ Նանսենի անվան ոսկե հուշամեդալով:

2011 թվականին՝ ՀՀ անկախության 20-րդ տարեդարձի առթիվ գրող, հրապարակախոս Մ. Տեր-Գուլանյանը պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով:

2013 թվականին պարգևատրվել է Երևանի քաղաքապետի ոսկե մեդալով:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով գրող, հրապարակախոս Մ. Տեր-Գուլանյանի բազմամյա վաստակը, ներդրած նշանակալի ավանդը, հրապարակախոսական, հասարակական և գրական մեծ գործունեությունը՝ առաջարկվում է Մերուժան Սարգսի Տեր-Գուլանյանին շնորհել «Երևան քաղաքի պատվավոր քաղաքացի» կոչում և Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՄԵՐՈՒԺԱՆ ՍԱՐԳՍԻ ՏԵՐ-ԳՈՒԼԱՆՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Մերուժան Սարգսի Տեր-Գուլանյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՄԵՐՈՒԺԱՆ ՍԱՐԳՍԻ ՏԵՐ-ԳՈՒԼԱՆՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Մերուժան Սարգսի Տեր-Գուլանյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ եվ/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ